*Հավելված N 2*
*2026 թվականի հունվարի «23»-ին կնքված*
***«1032-11003/26-ՀԿՃՑ10»** պայմանագրի*

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրում սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնում (Գյումրի) |
| Դրամաշնորհի N | ***«1032-11003/26-ՀԿՃՑ10»*** |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 03.01.2026 - 31.12.2026 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2026-30.06.2026 |
| Ներկայացման օր | 09.07.2026 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Տիգրանուհի Տարախչյան, ծրագրի ղեկավար |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Ծրագրի շրջանակներում նախատեսված է տարեցներին տրամադրել հետևյալ ծառայությունները՝

1. Շահառուների անհատական սոցիալական ծրագրերի հիման վրա սոցիալական ծառայությունների մատուցում:
2. Սոցիալ-հոգեբանական աջակցություն՝ ներառյալ ուղղորդում, ուղեկցում և համապատասխան օգնության տրամադրում:
3. Սննդի ապահովում՝ օրական մեկանգամյա կազմակերպմամբ:
4. Բուժքույրական խնամքի, խորհրդատվության և անհրաժեշտ աջակցության տրամադրում՝ ներառյալ դեղորայքի ապահովում ըստ կարիքի:
5. Շահառուների հիգիենիկ խնամքի կազմակերպում՝ ներառյալ լոգանքի և լվացքի ծառայությունների մատուցում:
6. Շահառուների նախասիրությունների համաձայն խմբակների աշխատանքների կազմակերպում:
7. Զբաղվածության և ժամանցի կազմակերպում՝ միջոցառումների, ինտելեկտուալ և ժամանցային խաղերի միջոցով, ինչպես նաև տոների և հիշարժան օրերի նշում:

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է շահառուների կարիքների համապարփակ գնահատում, որի հիման վրա մշակվել և կազմվել են անհատական սոցիալական աջակցության ծրագրեր:

- Շահառուներին տրամադրվել է շարունակական խորհրդատվություն և աջակցություն՝ նրանց սոցիալական խնդիրների արդյունավետ լուծման նպատակով:
- Երեք շահառուի ցուցաբերվել է աջակցություն նպաստների և սոցիալական այլ ծրագրերից օգտվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատրաստման գործընթացում:
- Շահառուները ուղեկցվել են համապատասխան կառույցներ՝ պոլիկլինիկա, բանկ, անձնագրային բաժին և ՄՍԾ, ապահովելով նրանց ծառայություններից լիարժեք օգտվելու հնարավորությունը:
- Իրականացվել են հեռախոսազանգեր և կազմակերպվել երկու հասցեական տունայց՝ բացակա շահառուների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն հավաքագրելու նպատակով:
- Շահառուներին ապահովվել է ամենօրյա սնունդ՝ նախապես մշակված և հավասարակշռված սննդակարգի համաձայն:
- Տրամադրվել է բուժքույրական խնամք, ինչպես նաև բժշկական խորհրդատվություն և աջակցություն՝ ներառյալ անհրաժեշտ դեղորայքի ապահովումը:
- Շաբաթական երկու անգամ կազմակերպվել են թերապևտիկ վարժանքներ՝ հատուկ մարզասարքերի կիրառմամբ:
- Ապահովվել է տարեց շահառուների անձնական հիգիենան և պատշաճ խնամքը. տրամադրվել է բաղնիք հաճախելու 131 տոմս, ինչպես նաև հնարավորություն՝ օգտվելու լվացքատան ծառայություններից: Լվացվել և արդուկվել են 28 տարեցների անկողնային պարագաները:
- Կամավոր վարսահարդարի կողմից սպասարկվել է 12 շահառու՝ ապահովելով նրանց արտաքին խնամքը:

Շահառուների ակտիվ զբաղվածությունն ու սոցիալական ներգրավվածությունը ապահովվել է բազմաբնույթ խմբակային գործունեության միջոցով, որոնք նպաստել են նրանց ֆիզիկական, մտավոր և ստեղծագործական կարողությունների զարգացմանը.

- **«Ֆիզ-արտ» խմբակը** շարունակել է իր հետևողական և բազմակողմանի աշխատանքը 12 շահառուի հետ՝ համադրելով տարբեր թերապևտիկ մոտեցումներ՝ արտթերապիա, ֆիզիոթերապիա, երաժշտաթերապիա, մանդալաթերապիա և ծեփագործություն: Եռամսյակի ընթացքում շաբաթական չորս անգամ անցկացվել են ֆիզիոթերապևտիկ վարժություններ, որոնք նպաստել են շահառուների կեցվածքի բարելավմանը և ընդհանուր առողջական վիճակի դրական դինամիկային: Կազմակերպվել են մանդալաթերապիայի 35, ռիթմոթերապիայի 15 և երաժշտաթերապիայի 10 սեանսներ: Իրականացվել են հիշողության, ուշադրության, մանր մոտորիկայի զարգացմանն ուղղված խաղեր և վարժանքներ՝ ներառյալ թվային, բառային և ասոցիատիվ մեթոդներ, ինչպես նաև ինտելեկտուալ խաղեր և խոսքի զարգացման տեխնիկաներ: Գնդակներով խաղային մրցույթները խթանել են ուշադրությունը, հիշողությունը և ուղեղի երկու կիսագնդերի ակտիվությունը: Կազմակերպվել է նաև ծեփագործության/պլաստիլինով պարապմունք 4 անգամ: Այն նպաստել է ձեռքերի մկանների ակտիվացմանն ու մանր մոտորիկայի զարգացմանը:

- **«Ստեղծագործող ձեռքեր» խմբակը** շարունակել է իր արդյունավետ գործունեությունը 13 շահառուի հետ՝ խթանելով նրանց ստեղծագործական մտածողությունն ու ձեռագործ հմտությունները: Եռամսյակի ընթացքում պատրաստվել են բազմատեսակ ձեռագործ աշխատանքներ՝ գործվածքից և հեյունից, մասնավորապես՝ արջուկ 25 հատ, թևնոց 27 հատ, պայուսակ 5 հատ, կախազարդ 35 հատ, գլխարկ 2 հատ, մանկական գորգ, դրամապանակ: Գործընթացը հարստացվել է նաև ուսուցողական տեսանյութերի դիտմամբ՝ տեխնոլոգիական հմտությունների զարգացման նպատակով:
- **«Հրաշագործները» խմբակը** շարունակել է իր ակտիվ գործունեությունը 10 շահառուի մասնակցությամբ՝ ապահովելով ինչպես տեսական, այնպես էլ գործնական գիտելիքների փոխանցում: Շահառուները ծանոթացել են նոր զարդանախշերի և կիրառել դրանք իրենց աշխատանքներում՝ պատրաստելով տարբեր դեկորատիվ իրեր՝ կրծքազարդեր՝ տառեր 35 հատ, բաժակի տակդիրներ՝ 15 հատ, կախազարդեր՝ 60 հատ:
- **«Մտքի թռիչք» խմբակը** ակտիվորեն աշխատել է 12 շահառուի հետ՝ զարգացնելով նրանց ստեղծագործական երևակայությունն ու կենտրոնացումը: Մաքրամեի տեխնիկայով պատրաստվել են տարբեր ձեռագործ իրեր՝ վզնոցներ՝ 5 հատ, կախազարդեր 130 հատ՝ (10 հատ կրիա, թիթեռ 65 հատ, ֆլամինգո 15 հատ, ծաղիկ 40 հատ), թևնոցներ՝ 50 հատ, որոնք նպաստել են ինչպես գեղագիտական ընկալման, այնպես էլ մանր մոտորիկայի զարգացմանը:
- **Երգի խմբակը** կամավոր խմբավարի ղեկավարությամբ շարունակել է իր գործունեությունը 7 մասնակցի հետ: Եռամսյակի ընթացքում խմբի անդամները սովորել և ներկայացրել են 5 երգ՝ նպաստելով նրանց երաժշտական ունակությունների զարգացմանը, ինքնարտահայտմանն ու թիմային համագործակցությանը:

*Այս խմբակային աշխատանքները էապես նպաստել են շահառուների ակտիվացմանը, սոցիալական ներառմանը և կյանքի որակի բարելավմանը:*

Շահառուների լիարժեք և բովանդակալից ժամանցի կազմակերպման նպատակով իրականացվել են բազմաբնույթ միջոցառումներ, որոնք նպաստել են նրանց սոցիալականացմանն ու հոգեբանական բարեկեցությանը.

- Կազմակերպվել և անցկացվել են տարբեր ինտելեկտուալ խաղեր և հոգեբանական թեստեր, այդ թվում՝ «Ում աչքերն են», «Իմ երիտասարդությունը», «Պատասխանիր 7 վայրկյանում», «Ալյաս», «Շուտ ասա», որոնք խթանել են հիշողությունը, արագ մտածողությունը, հաղորդակցման հմտությունները և ինքնարտահայտումը:
- Կազմակերպվել են մշակութային և տոնական միջոցառումներ՝ նվիրված միջազգային և ազգային հիշարժան օրերին («Մայրության և գեղեցկության», «Սուրբ Զատիկ», «Աշխատավորների միջազգային օր», «Հաղթանակի օր», «Առաջին Հանրապետության օր»:
- Կազմակերպվել են ֆիլմերի դիտումներ (3 անգամ): Ցուցադրվել են «Խաթաբալա, «Աշնան արևը», «Տժվժիկը» ֆիլմերը՝ ապահովելով հաճելի և հիշարժան ժամանց:
- Տասներկու շահառու շարունակել են ակտիվորեն մասնակցել «Առողջ ուղեղի հայկական ծրագրի» շրջանակում կազմակերպվող «Հիշողության սրճարան» հանդիպումներին, որոնք իրականացվում են «Ալցհայմերի խնամք Հայաստան» հասարակական կազմակերպության կողմից՝ նպաստելով հիշողության պահպանմանն ու սոցիալական շփմանը:
- Գրական ցերեկույթ: Շիրակի մարզային գրադարան-ի «Այլ խմբերի սպասարկման» բաժնի գրադարանավարները հյուրընկալվել էին «Հայկական Կարիտաս»-ի «Տարեցների ցերեկային հոգածության կենտրոնում»: Գրադարանավար Լ. Պետրոսյանը ներկայացրեց «Զարմանահրաշ կանայք» խորագիրը կրող միջոցառումը՝ նվիրված կանանց միամսյակին:
- Թիվ 11 դպրոցի երգչախումբը ևս իր ելույթներով ուրախացրել է շահառուներին՝ նպաստելով նրանց հուզական ակտիվացմանը և բարձր տրամադրությանը:
- Հարգանքի տուրք Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված:

- Շահառուները մասնակցել են Գյումրու ժող.գործիքների պետական նվագախմբի կողմից կազմակերպված համերգին:

*Վերոնշյալ միջոցառումների արդյունքում շահառուները դարձել են առավել ակտիվ և սոցիալականացված, ներգրավված տարբեր խմբակներում և հասարակական կյանքում: Նրանց մեկուսացվածության և մենակության զգացումը էապես նվազել է, փոխարենը ձևավորվել է ներգրավվածության, կարևորության և արժևորման զգացում: Բարելավվել է նրանց ինտեգրումը լայն հասարակության մեջ, և նրանք իրենց ընկալում են որպես հասարակության լիիրավ և ակտիվ անդամներ՝ շրջապատված մշտական խնամքով, ուշադրությամբ և աջակցությամբ:*

<u>Անձնակազմի կարողությունների հզորացում</u>
«Տարեցների ցերեկային հոգածության կենտրոն»-ի աշխատակիցները մասնակցել են մի շարք մասնագիտական դասընթացների և սեմինարների, որոնք նպաստել են նրանց գիտելիքների, հմտությունների և պրակտիկ կարողությունների զարգացմանը.

**Ծրագրային թիմը պարբերաբար մասնակցել է «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի կողմից կազմակերպած առցանց դասընթացների՝**

- **Ապրիլի 15** – «Մեթոդաբանություն»:
- **Ապրիլի 29**– «Ֆունկցիոնալության գնահատում» «Սոցիալական 3 ծառայությունների բովանդակային քննարկում:
- **Մայիսի 8** – «Հոգեկան առողջություն»:

*Դասընթացներն ու աշխատարանները նպաստել են աշխատակիցների մասնագիտական հմտությունների ընդլայնմանը, արդյունավետ թիմային աշխատանքի և սոցիալական ծառայությունների որակի բարձրացմանը:*

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

- Ապրիլի 1- Գրական ցերեկույթ: Շիրակի մարզային գրադարան-ի «Այլ խմբերի սպասարկման» բաժնի գրադարանավարները հյուրընկալվել էին «Հայկական Կարիտաս»-ի «Տարեցների ցերեկային հոգածության կենտրոնում»: Գրադարանավար Լ. Պետրոսյանը ներկայացրեց «Ջարմանահրաշ կանայք» խորագիրը կրող միջոցառումը՝ նվիրված կանանց միամսյակին: https://www.facebook.com/share/p/1J3wvakRhN/?mibextid=wwXIfr

- Ապրիլի 8- Սուրբ Զատիկ https://www.facebook.com/share/p/1FCw5Mk4tf/?mibextid=wwXIfr

- Ապրիլի 9- Հայկական Կարիտասի Գյումրու «Տարեցների ցերեկային կենտրոնը» հյուրընկալեց «Գյումրու թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի աշակերտներին: https://www.facebook.com/share/p/1CKS7sk2PD/?mibextid=wwXIfr

- Ապրիլի 24- Հարգանքի տուրք Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված: https://www.facebook.com/share/p/1bjsANoVpY/?mibextid=wwXIfr

Մայիսի 14- «Հայկական Կարիտասի» տարեցների ցերեկային կենտրոնի շահառուներն ու աշխատակիցներն հյուրընկալվել էին Շիրակի մարզային գրադարանում: Կազմակերպվել է

միջոցառում Մայիսյան հերոսամարտերին և Հայաստանի Առաջին Հանրապետության հոչակմանը նվիրված:
https://www.facebook.com/share/p/1BQexWGNYT/?mibextid=wwXIfr
https://www.facebook.com/share/r/1CUrf1paLF/?mibextid=wwXIfr

- Մայիսի 28- Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակմանը նվիրված:
https://www.facebook.com/share/v/1M1mYmCu6k/?mibextid=wwXIfr

Ծրագրի շրջանակներում անցկացված միջոցառումների և իրականացված աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ թղթաբանությունը և նկարները հավաքվում և պահպանվում են:

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում դժվարություններ և խնդիրներ չեն առաջացել:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել շահառուներին տրամադրվող ծառայությունները՝ ապահովելով նրանց խնամքի և սոցիալական աջակցության բարձր մակարդակ.

- Կատարել կարիքների վերագնահատում՝ փոփոխություններ մտցնելով անհատական սոցիալական ծրագրերում
- Կազմակերպել ամենօրյա ցերեկային խնամք՝ շաբաթական հինգ օր շարունակական ռեժիմով,
- Տրամադրել համալիր սոցիալ-հոգեբանական աջակցություն՝ ուղղված շահառուների բարեկեցության և սոցիալական հարմարվողականության խթանմանը,
- Կազմակերպել բազմաբնույթ ժամանցային և ինտելեկտուալ խաղեր, ինչպես նաև մշակութային և սոցիալական միջոցառումներ,
- Ապահովել շահառուների կանոնավոր առողջապահական վերահսկողություն, անհրաժեշտության դեպքում՝ դեղորայքով աջակցություն, ինչպես նաև իրականացնել իրազեկող զրույցներ հիվանդությունների կանխարգելման և առողջ ապրելակերպի պահպանման վերաբերյալ,
- Նշել հիշատակի և տոնական օրեր՝ նպաստելով շահառուների ակտիվ ներգրավվածությանը և սոցիալական կյանքի հարստացմանը:

Այս միջոցառումները միտված են շահառուների կյանքի որակի շարունակական բարելավմանը, նրանց ակտիվացմանը և հասարակական կյանքում առավել լիարժեք ներգրավվածությանը:

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:

- «ԱՄՔՈՐ Հայաստան» (UMCOR Armenia) բարեգործական հիմնադրամի կողմից կենտրոնին տրամադրվել է 58.8 կգ պանիր:
- Առավել կարիքավոր 10 շահառու շարունակում են օգտվել քաղաքային տրանսպորտից անվճար՝ հատուկ քարտերի միջոցով:
- Անհատ բարերարների աջակցությամբ շահառուներին մեկ անգամ տրամադրվել է սննդային փաթեթներ:
- Անհատ նվիրատուների կողմից մեկ անգամ կազմակերպվել է հյուրասիրություն (մատաղ)՝9 կգ գառի միս և 40 հատ լավաշ:

Այս աջակցությունները զգալիորեն նպաստել են շահառուների սոցիալական բարեկեցության բարելավմանը և նրանց առօրյա կարիքների բավարարմանը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Ք. Երևան, կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ -01506515
Գլխավոր քարտուղար՝

-------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Հայկական Կարիտաս ԲՀԿ
Ք. Գյումրի, փ. Հ. Սարգսյան, նրբ. 3, տ. 8
ՀՎՀՀ - 05514397

Նախագահ՝ Ճորճ Միշելի Տնկայէ
Գևորգ Արք. Նորատունկեան

-------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության ցերեկային կենտրոնում շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | **Շահառուների թվաքանակը հաշվետու ժամանակահատվածի սկզբում/վերջում** | 47/47 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 40/40 |
| 2 | **Հաշմանդամություն ունեցող անձանց թվաքանակը** | 11 |
| 2.1 | այդ թվում՝ կին | 9 |
| 2.2 | այդ թվում՝ 18-65 տարեկան | 0 |
| 2.2.1 | այդ թվում՝ կին | 0 |
| 2.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 2.2.3 | 40-65 տարեկան | 0 |
| 2.3 | 65 տարեկանից բարձր | 11 |
| **3.** | **Մեկանգամյա սննդի տրամադրում** | 47 |
| **4.** | **Կարիքի գնահատում** | 47 |
| **5.** | **Թերապիայի կազմակերպում** | 12 |
| **6.** | **Խմբակների կազմակերպում** | 47 |
| 6.1 | Ստեղծագործող ձեռքեր | 13 |
| 6.2 | Հրաշագործները | 10 |
| 6.3 | Ֆիզ-արտ | 12 |
| 6.4 | Մտքի թռիչք | 12 |
| 6.5 | Երգի խմբակ | 7 |
| 7. | Մշակութային միջոցառումների կազմակերպում | 12 |
| 7.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 2 |
| 8. | Այլ ծառայություններ<br>• բուժքույրի ծառայություններ<br>• լվացքատան ծառայություններ<br>• լոգանքի ծառայություններ | <br>47 շաահառու<br>28 շահառու<br>131 բաղնիքի տոմս |